ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
ՀՀ ԳԱԱ Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ՏՆՕՐԵՆ՝ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՈԿՏՈՐ
..... Վ. ԴԵՎՐԻԿՅԱՆ

19-ը ապրիլի 2022 թվական

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մարիամ Արամի Սիրունյանի «Պատերազմը և Օլդինգտոնի վեպերը. բարոյական և սոցիալական ասպեկտներ» թեկնածուական ատենախոսության վերաբերյալ (թվանիշը՝ Ժ.01.07. - «Արտասահմանյան գրականություն»)

ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի արտասահմանյան գրականության, գրական կապերի և գրականության տեսության բաժնի 19. 04. 2022 թ. նիստի

Նիստին մասնակցում էին՝

բ.գ.դ., պրոֆ. Հ. Էդոյանը, բ.գ.թ., դոցենտ Ք. Բեջանյանը, բ.գ.թ. Լ. Գասպարյանը, բ.գ.թ. Ա. Սողոյանը, բ.գ.թ. Վ. Նավասարդյանը և բ.գ.թ. Զ. Հայրյանը:

Նիստը վարում էր

Արտասահմանյան գրականության, գրական կապերի և գրականության տեսության բաժնի վարիչ՝ բ.գ.թ., դոցենտ Ք. Բեջանյանը

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

Մարիամ Արամի Սիրունյանի «Պատերազմը և Օլդինգտոնի վեպերը. բարոյական և սոցիալական ասպեկտներ» թեկնածուական ատենախոսության քննարկումն ու հրապարակային պաշտպանության երաշխավորելու հարցը:

Արտահայտվեցին՝

բ.գ.դ., պրոֆ. Հ. Էդոյանը, բ.գ.թ., բ.գ.թ. Լ. Գասպարյանը, բ.գ.թ. Ա. Սողոյանը և բ.գ.թ. Զ. Հայրյանը:

Ելույթ ունեցողները նշեցին, որ Մ. Սիրունյանի ատենախոսությունը նվիրված է 20-րդ դարասկզբի նշանավոր արձակագիր, անգլիացի հեղինակ Ռիչարդ Օլդինգտոնի վիպագրությանը, ի մասնավորի՝ պատերազմի, դրա բարոյական ու սոցիալական ասպեկտների քննությանը: Ատենախոսությունն աչքի է ընկնում մի շարք դրական հատկանիշներով: Մ. Սիրունյանը Օլդինգտոնի վեպերը դիտարկում է համակողմանի մոտեցմամբ՝ անդրադառնալով ժամանակակից հարցադրումներին և կիրառելով համապատասխան գիտատեսական գործիքակազմ: Ատենախոսի խոսքերով՝ իր աշխատանքի նպատակն է. «համակողմանի քննության առնել Օլդինգտոնի վեպերը, պատկերել Առաջին աշխարհամարտի հետևանքով առաջացած, այսպես կոչված, «կորուսյալ սերնդի» ճակատագրի ընթացքն ու ներկայացնել այդ սերնդի բազմապիսի խնդիրների

ոլորտը գրողի վեպերում» (էջ 4): Այս թեման ընտրելու հիմնական պատճառներից մեկն, ըստ ատենախոսի, այն է, որ խնդիրը դեռևս շարունակում է մնալ գիտական բաց հարցադրում հայ գրականագիտության մեջ, ինչը և պայմանավորում է ատենախոսության արդիականությունը:

Մ. Սիրունյանի նպատակն է ատենախոսության շրջանակներում ներկայացնել Օլդինգտոնի վիպական կերպարների հոգեբանական վերլուծությունը, հերոսների ներանձնային խնդիրները, կնոջ կերպարը պատերազմական և հետպատերազմյան ժամանակահատվածում, ինքնասպանություն-մահ երկփեղկության օլդինգտոնյան ընկալումը, սեր-էրոսի և կին-տղամարդ փոխհարաբերության պրոբլեմները և այլն: Այս ամենը հանգամանալից ուսումնասիրված է աշխատանքում:

Ներածության մեջ համառոտ ներկայացված է աշխատանքի մեթոդաբանական հիմքը, որտեղ հեղինակը տալիս է թեմային առնչվող քննադատական գրականության ընդարձակ ակնարկ: Սիրունյանի առաջարկած հայեցակարգը հիմնվում է հարուստ տեսական և մեթոդաբանական բազայի վրա, որը ներառում է գլխավորապես ռուս, անգլիացի և ամերիկացի տեսաբանների և գրականագետների կարևորագույն դրույթները հարցի վերաբերյալ: Ինչպես նշում է ատենախոսը, մինչ օրս Օլդինգտոնի գրականության վերաբերյալ մեզանում առկա ուսումնասիրություններում ուշադրությունը կենտրոնացվել է «հիմնականում պոեզիայի ու փոքր կտավի գործերի վրա» (սեղմագիր, էջ 6:) Այս հեղինակի ստեղծագործությունը, հատկապես վեպերը, գրեթե ուսումնասիրված չեն հայ գրականագիտության մեջ, ինչը և պայմանավորում է աշխատության նորույթը:

Միրունյանը, ինչպես ասվեց, առաջին անգամ հայ գրականագիտության մեջ գիտականորեն հիմնավորում է այդ փաստը՝ առավելապես կենտրոնանալով «հերոսների ընդհանուր, ներքին կապի, հերոս-ժամանակաշրջան աղերսների, մարդու և նրա հոգեբանական խնդիրների աղավաղման» (սեղմագիր, էջ 7), ինչպես նաև կերպարների հոգեբանական վերլուծության վրա: Այդուհանդերձ, գոյություն ունեն խորքային հոգեվերլուծական մի շարք հետազոտություններ, որոնք դուրս են մնացել ատենախոսի ուշադրությունից կամ առնվազն կարող էին բարերար ազդեցություն ունենալ

ատենախոսության մի քանի դրույթների մեկնաբանման վրա: Օրինակ՝ կնոջ կերպարը պատերազմական և հետպատերազմական ժամանակահատվածում համակողմանի մեկնաբանվել է 2021 թ. Շախնոզա Խորիևեայի «Կանացի կերպարները Ռիչարդ Օլդինգտոնի «Հերոսի մահը» վեպում» (Chorieva, Shakhnoza (2021) "Female characters in the novel "Death of a hero" by Richard Aldington," Philology Matters: Vol. 2021: Iss. 2, Article 7. DOI: 10.36078/987654493/ Available at: https://uzjournals.edu.uz/philolm/vol2021/iss2/7) ուսումնասիրության մեջ: Ինքնասպանության և մահվան թեման Օլդինգտոնի վեպերում քննվել է 2005 թ. Օլգա Գալակտիոնովայի «Ինքնասպանությունը 20-րդ դարի անգլիական գրականության մեջ» (https://www.dissercat.com/content/samoubiistvo-v-angliiskoi-literature-20-go-veka; https:// cheloveknauka.com/samoubiystvo-v-angliyskoy-literature-20-go-veka) ատենախոսության մեջ, որտեղ մի ամբողջ գլուխ նվիված է Օլդինգտոնին, իսկ Նիկոլայ Ալեքսեևի «Գլխավոր հերոսի՝ Ջ. Ուինթերբուրնի, հոգևոր էվոլյուցիան գունային սիմվոլիզմի տեսանկյունից (հիմնված Ռ. Օլդինգթոնի «Հերոսի մահը» վեպի») (https://docplayer.com/46990884-Alekseev-nikolay-nikolaevich-duhovnaya-evolyuciya-glavnogo-geroya-dzh-uinterborna-v-aspekte-cvetovoy-simvoliki-po-romanu-r-oldingtona-smert-geroya.html) հետազոտությունը, որը տպագրվել է 2016թ. և առանցքային կարող է համարվել հոգեվերլուծության դիտանկյունից:

Այստեղ հարկ ենք համարում նշել, որ ատենախոսության գրականության ցանկը համալրված չէ արդի ուսումնասիրություններով: Հայտնի փաստ է, որ վաղուց արդեն ժամանակակից գիտական շրջանակներում, բարձր ինդեքսավորում ունեցող գիտական ամսագրերում տպագրվող ուսումնասիրություններում կարևորվում են վերջին 3 կամ լավագույն դեպքում 5 տարվա տպագրված աշխատությունների վերլուծությունը, որը միտված է նորովի լուսաբանել արդի գրականագիտության տեսապատմական ու հայեցակարգային խնդիրները: Սույն ատենախոսության գրականության ցանկը համարլված է միայն մինչև 2015թ. աշխատություններով: Միգուցե կամ թերևս այս բացթողումը առաջացել է այն պատճառով, որ ատենախոսը վերջին տարիներին չի զբաղվել գիտական աշխատանքով, քանզի վերջին հոդվածը տպագրել է 2018թ.: Նաև ճիշտ չենք համարում

նմանատիպ գիտական աշխատանքում օգտագործել և ցիտել դասագրքեր (օրինակ, էջ 151 № 55, 56, 71):

Ատենախոսը ընդհանուր գծերով ներկայացնում է նյութի ուսումնասիրության աստիճանը, հարցի պատմությունը, գիտական և կիրառական նշանակությունը, ատենախոսության նպատակներն ու խնդիրները, հիմնավորում թեմայի արդիականությունն ու գիտական նորույթը, ինչպես նաև վերլուծության մեթոդները: Ուսումնասիրությունը ատենախոսը կատարում է վերլուծական, տիպաբանական ու պատմահամեմատական մեթոդներով՝ շոշափելով նաև թեմայի հոգեբանական ու փիլիսոփայական հարցադրումները: Պատերազմին՝ իբրև ուսումնասիրության հենակետային խնդրի, Սիրունյանը փորձում է մոտենալ տարբեր դիտանկյուններից՝ կատարելով հոգեբանական և փիլիսոփայական վերլուծություններ: Ենթագլուխների բաժանված երեք գլուխներում հեղինակը վեպերին մոտենում է տարբեր դիտանկյուններից՝ ընդհանուրի և մասնավորի, այն է՝ լայնի և նեղի հատույթներով դիտարկելով Օլդինգտոնի գործերը:

Աշխատանքի առաջին գլխում («**Պատերազմի ընկալումը զարգացման ընթացքի մեջ**») քննության նյութ է դառնում պատերազմն իր հարափոփոխ ընթացքով: Նախապատերազմական, պատերազմական ու հետպատերազմական իրականությունը ներկայացվում է պատճառահետևանքային կապի պրիզմայով՝ որպես ամբողջական ու համապարփակ երևույթ:

Երկրորդ՝ **«Պատերազմ և բարոյականություն»** գլխի քննության նյութն արդեն պատերազմի կիզակետում կանգնած մարդն է՝ իր ներքին բախումներով ու ապրումներով: Այս դիտանկյունից հատկապես ուշարժան է «Մեր-էրոսի և կին-տղաարդ փոխհարաբերության պրոբլեմը Օլդինգտոնի վեպերում» ենթագլուխը, որի վերնագրում արտահայտված հստակ հարցադրումը չի հակասում բաժանման ընդհանուր համակարգին: Այստեղ դիտելի է նաև ինքնասպանության հարցադրումը: Այս գլխում Մ. Սիրունյանը հոգեբանական լրջամիտ վերլուծություն է կատարում՝ մարդուն դիտելով տարաբնույթ հարաբերությունների համապատկերում: Բայց գրեթե նույն խնդիրը դրվում էր նաև առաջին

գլխի /«Պատերազմի օլդինգտոնյան ըմբռնումները»/ ենթագլուխում, որն, ըստ էության, ներառում է հաջորդող ենթագլուխները: Տրամաբանական խնդիր կա նաև «Ինքնասպանություն-մահ երկփեղկության օլդինգտոնյան ընկալումը» ենթագլխի վերնագրում՝ ինքնասպանությունն ինքնին մահ է, և վերնագրի մակարդակում այդ երկու եզրույթները հակադիր չեն, ուստի չկա երկփեղկվածություն:

Աշխատանքի երրորդ գլխում **(«Մարդ-հասարակություն հիմնախնդիրը պատերազմյան և հետպատերազմյան հարացույցում»)** ատենախոսը հենվում է փիլիսոփայական հարցադրումների վրա՝ անհատից անցնելով սերունդներին: Հնի ու նորի, անցնողի ու գալիքի հակադրության կառույցով նա դիտարկում է սերունդների բախումը: Այս հակադրական համակարգում էլ առանձնանում է անհատի օտարացման դրաման, և ուրվագծվում է գալիքը՝ նոր ժամանակի նոր հերոսը:

Աշխատանքի շարադրանքն ընդհանուր առմամբ գրագետ է, այն գրված է գիտական հայերենով, առկա է մասնագիտական համապատասխան եզրույթային բառապաշար, գիտական ապարատը ճշգրիտ է: Սակայն, խորհուրդ կտայինք հատուկ ուշադրություն դարձնել սեղմագրի ռուսերեն և անգլերեն ամփոփումներին, որովհետև դրանք պարունակում են որոշ ոճական և իմաստային անհամապատասխանություններ, ինչը կշփոթեցնի ռուսերեն և անգլերեն չիմացող մասնագետների՝ տվյալ աշխատանքի ընկալումը (օրինակ, պատերազմի գեղարվեստականացումը/ художественность войны/ the art of war/ էջ 19, 21) կամ երկրորդ գլխի վերնագիրը «Պատերազմ և բարոյականություն» ոչ թե «Պատերազմի բարոյականություն» /“War’s Morality”/ և այլն:

Աշխատանքը զերծ չէ նաև որոշ թերություններից: Ինչպես արդեն նշեցինք, ներածության մեջ Մ. Սիրունյանը հետևողականորեն անդրադառնում է թեմայի ուսումնասիրվածության պատմությանը՝ նշելով խնդրով զբաղված և զբաղվող գիտնականների անունները: Այդ ուսումնասիրությունների մի մասին անդրադարձ է կատարվում նաև բուն շարադրանքում: Հարկ ենք համարում ընդգծել այն փաստը, որ որոշ գիտական աշխատանքների վերնագրեր ատենախոսության էջերում նշված չեն, տրված չեն համապատասխան հղումները՝ թեպետ ակնհայտ է ատենախոսի կրած ազդեցությունն այդ

ուսումնասիրություններից: Որոշ էջեր անգամ բառացի կրկնում են ռուս գրականագետների աշխատությունները: Գրականության «Վեպ-ջազ» տեսակի մասին հատվածները (էջ 37-38), օրինակ, հիշեցնում են Ա. Վ. Սինյայայի հոդվածը, որը չի նշել Մ. Սիրունյանը: Ասվածը փաստելու համար բերենք մեկ նախադասության օրինակ:

Սիրունյան - «Ամենևին պատահական չէ, որ Օլդինգտոնն էլ իր վեպի համար նախընտրում է «վեպ-ջազ» ձևաչափը, որը թույլ էր տալիս լավագույնս արտացոլելու դարի տրամադրությունն ու պրոբլեմատիկան» (ատենախոսություն, էջ 38):

Синяя «Отсюда мы видим, что композиционная форма «романа-джаза» была выбрана Р. Олдингтоном не случайно, поскольку выбор именно данной формы позволял автору более правдиво отобразить настроение эпохи и вскрыть глубину рассматриваемых в романе проблем» (Տե՛ս **Синяя А. В.,** Джазовые традиции в романе Р. Олдингтона «Смерть Героя»// «Общественные и гуманитарные науки» https://lib.herzen.spb.ru/media/magazines/contents/1/24(55)/sinyaya_24_55_290_293.pdf/ էջ 292): «Ներածության» **Հետազոտության մշակվածությունը և գիտական նորույթը** հատվածում (էջ 9-12), երբ ատենախոսը նշում է նյութն ուսումնասիրած հեղինակների անունները, բերում համապատասխան մեջբերումներ, բացահայտ է Ս. Ա/ Ֆադեևայի ատենախոսության ազդեցությունը: Սիրունյանն անում է նույն մեջբերումները, օգտագործում գրեթե նույն գնահատողական խոսքերը, ինչ Ֆադեևան (Տե՛ս Фадеева С.А., Романы Р. Олдингтона 1930-х гг.: Проблема жизненных установок героя, формы раскрытия авторского сознания, диссертация, 2002: https://www.dissercat.com/content/romany-r-oldingtona-1930-kh-gg-problema-zhiznennykh-ustanovok-geroya-formy-raskrytiya-avtors): Թերություն և լուրջ բացթողում է նաև որոշ կոնկրետ աղբյուրների հղումների բացակայությունը: Աշխատանքում քանիցս հանդիպում են նմանատիպ արտահայտությունների.

Օրինակ՝ «Թե՛ անգլիացի և թե՛ ռուս գրականագետները, որոնք այս կամ այն չափով անդրադարձել են «Հերոսի մահը» վեպի քննությանը, գրեթե միշտ իրենց խոսքը եզրափակել են...» (էջ 65), կամ՝ «Խորհրդային գրականագիտությունն ընդգծում է...» (էջ 95) և այլն: Այս դեպքերում հստակ հղումներ չեն տրվում, չի նշվում՝ որ կոնկրետ հեղինակներն են պնդում այդ միտքը, և որ աղբյուրներում կարելի է ծանոթանալ դրանց: Այսպիսի

արտահայտությունները հակասում են գիտական շարադրանքին և անորոշություն են հաղորդում ուսումնասիրությանը:

Ատենախոսությունը վերջանում է ծավալուն **Եզրակացություններով,** որտեղ Մարիամ Սիրունյանը ներկայացնում է աշխատության գլխավոր եզրահանգումները:

Այսպիսով, ամփոփելով տվյալ աշխատության՝ մեր գնահատականը, նշենք, որ 20-րդ դարի արտասահմանյան գրականության կարևորագույն հեղինակներից մեկի՝ Ռիչարդ Օլդինգտոնի վիպագրությունը մի որոշակի հայեցակարգով ուսումնասիրելու և վերլուծելու ուղղությամբ ծավալուն աշխատանք է կատարվել, որն ունի գիտական պատշաճ մակարդակ և հայեցակարգային հիմնավորված ապարատ: Բայց ատենախոսությունն առավել կանոնակարգված և անթերի տեսնելու մտադրությամբ վերոհիշյալ դիտողություններին ուզում ենք ավելացնել հետևյալը.

1. Կցանկանայինք, որ բոլոր գլուխները պարտադիր ավարտվեին ատենախոսի ինքնուրույն եզրահանգումներով: Նաև, որ գլուխները և ենթագլուխները ավելի ճշգրիտ բաժանում ունենային և հիմնախնդիրները հստակ ձևակերպված լինեին, ինչը թույլ կտար խուսափել տարբեր ենթագլուխներում թեմատիկ նույն հարցադրումների կրկնողությունից: Վերնագրերը նույնպես հաջող չեն ընտրված և չեն արտացոլում գիտական խնդիրը:
Այժմ անդրադառնանք առաջին հայացքից տեխնիկական վրիպում համարվող, բայց գիտական աշխատանքների համար կարևորագույն երկու խնդրի
2. Անհրաժեշտ է աշխատանքում հստակեցնել տեխնիկական ապարատը և խուսափել կրկնություններից ու տառասխալներից: Օրինակ, интелектуальный, էջ 12, коментарии, էջ 151, красн новь, էջ 152, Բախտինի աշխատությունը /էջ 111/ նշված չէ գրականության ցանկում և այլն: Հնարավորության դեպքում խուսափել տեխնիկական անճշտություններից: Օրինակ, որոշ մեջբերումներ ներկայացված են

ոչ ճիշտ, ոչ լիարժեք (էջ 18 № 22 կամ էջ 153 № 86 – ոչ թե веки, այլ պետք է լինի вехи, էջ 21 № 24 և էջ 149 № 23, էջ 126 № 258 և էջ 151 № 60-63?, էջ 28 № 35 և էջ 152 № 73; էջ 33 № 47 և էջ 150 № 49 և այլն):

Որոշեցին՝ Մարիամ Արամի Սիրունյանի «Պատերազմը և Օլդինգտոնի վեպերը. բարոյական և սոցիալական ասպեկտներ» թեկնածուական ատենախոսությունը բավարարում է Ժ.01.07. /Արտասահմանյան գրականություն/ մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ատենախոսությանը ներկայացվող պահանջները և այն կարելի է երաշխավորել հրապարակային պաշտպանության:

Կարծիքը ձևակերպված է ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի Արտասահմանյան գրականության, գրական կապերի և գրականության տեսության բաժնի նիստում:

Արտասահմանյան գրականության, գրական կապերի և գրականության տեսության բաժնի վարիչ՝ բ.գ.թ., դոցենտ Ք. Բեջանյանը

Հաստատում եմ բ.գ.թ., դոցենտ Ք. Բեջանյանի ստորագրությունը՝

Գրականության ինստիտուտի գիտքարտուղար՝ բ.գ.թ. Հ. Որսկանյան

19. 04. 2022թ.

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
ՀՀ ԳԱԱ Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ՏՆՕՐԵՆ՝ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՈԿՏՈՐ
.....Վ. ԴԵՎՐԻԿՅԱՆ